# «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

| Հաշվառման համար | Խմբագրության համար | Հաստատման ամսաթիվ | Ուժի մեջ մտնելու ամսաթիվ |
|---|---|---|---|
| CHARTER 04#6 | 1 | 17.10.2024թ. | 15.11.2024թ. |

**Հեղինակ՝**

| Ստորաբաժանում | Պաշտոն | Անուն Ազգանուն |
|---|---|---|
| Կորպորատիվ իրավական բաժին | Բաժնի պետ | Նարեկ Անտոնյան |

**Նախահաստատող՝**

| Պաշտոն | Անուն Ազգանուն |
|---|---|
| Գլխավոր գործադիր տնօրեն | Հակոբ Անդրեասյան |
| «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդին կից կառավարման, նշանակումների, և վարձատրությունների հանձնաժողովի նախագահ | Բրունո Շարիե |

**Հաստատող՝**

| Պաշտոն | Անուն Ազգանուն |
|---|---|
| Խորհրդի նախագահ | Ռաֆայել Սարգսյան |

## 1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդին կից ռազմավարության հանձնաժողովի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) խորհրդին կից ռազմավարության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման կարգը, Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները, նիստերի գումարման, դրանց մասնակցության կարգը, Հանձնաժողովի գործունեությունը, պատասխանատվության ոլորտները և Հանձնաժողովի նախագահի պատասխանատվության շրջանակը:

1.2. Կանոնադրությունը կիրառվում է Բանկի խորհրդի, Հանձնաժողովի նախագահի, անդամների, քարտուղարի, Բանկի ղեկավարների և աշխատակիցների կողմից:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Հանձնաժողովը դիտարկում է, հայտնում է կարծիք, ներկայացնում է առաջարկներ և խորհրդատվություն է տրամադրում Խորհրդին Կանոնադրության 7-րդ գլխով սահմանված՝ Հանձնաժողովի պատասխանատվության ոլորտների վերաբերյալ:

## 3. ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Հանձնաժողովը (ներառյալ՝ Նախագահը) պետք է բաղկացած լինի առնվազն երեք անդամից:

3.2. Հանձնաժողովի նախագահը պետք է նշանակվի Խորհրդի կողմից Խորհրդի անկախ անդամների կազմից:

## 4. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ

4.1. Հանձնաժողովի նիստերին մասնակցելու իրավունք ունեն միայն Հանձնաժողովի անդամները:

4.2. Նիստին ամբողջությամբ կամ մասամբ կարող է ներկա գտնվել ցանկացած այլ անձ՝ Հանձնաժողովի նախագահի հրավերով:

4.3. Հանձնաժողովի նիստերին հնարավորության դեպքում ակնկալվում է անդամների առկա մասնակցությունը, սակայն նրանք կարող են նաև մասնակցել հեռախոսակապի կամ տեսազանգի միջոցով:

## 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՔՎՈՐՈՒՄԸ

5.1. Հանձնաժողովի նիստերը գումարվում են բավարար ժամկետով նախապես ծանուցման պայմանով, Հանձնաժողովի կողմից որոշված հաճախականությամբ և ժամկետներում:

5.2. Նիստերի քվորումը առկա է անդամների երկու երրորդի մասնակցության դեպքում:

5.3. Հանձնաժողովի քարտուղարը Բանկի կորպորատիվ քարտուղարն է (կամ վերջինիս պատվիրակը):

## 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

6.1. Հանձնաժողովի նախագահի գործառույթը պահանջում է.

1) ղեկավարել Հանձնաժողովը՝ ապահովելով վերջինիս պարտականությունների արդյունավետ և Բանկի ընդհանուր ռազմավարական նպատակներին համահունչ կատարումը,

2) խթանել բաց, ներառական և, անհրաժեշտության դեպքում, բարդ քննարկումներ,

3) ապահովել Հանձնաժողովի կողմից իր առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը և բավարար ուշադրությունը իր իրավասության ներքո գտնվող հարցերին,

4) կազմակերպել Հանձնաժողովի աշխատանքները,

5) հանդիսանալ կապող օղակ Հանձնաժողովի, գործադիր մարմնի և Խորհրդի միջև,

6) Խորհրդին զեկուցել Հանձնաժողովի գործունեության մասին:

6.2. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը կարող է դիմել Հանձնաժողովի նախագահին՝ նիստ

հրավիրելու խնդրանքով՝ Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն ստանալու կամ վերջինիս հետ կապված ծագող հնարավորությունները քննարկելու նպատակով:

## 7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

7.1. Հանձնաժողովի պատասխանատվության ոլորտը ներառում է հետևյալը.

***1) Բանկի ընդհանուր կորպորատիվ նպատակը, որը ներառում է.***

ա. իրականացվելիք բիզնեսի ընդհանուր տեսլականը,

բ. հիմնական շահառուների ակնկալիքները, օրինակ՝ բաժնետերերը, անձնակազմը, հայ հասարակությունը և այլն,

գ. գլոբալ նպատակները, օրինակ՝ շահութաբերության ակնկալվող մակարդակը, գործողությունների բնույթը/մակարդակը, սոցիալական և կոլեկտիվ նպատակներին նպաստելը,

դ. հիմնական արժեքները:

***2) Առանցքային բիզնես առաջնահերթությունները և նպատակները, որը ներառում է.***

ա. շուկաները, որոնց պետք է ուղղված լինի Բանկի գործունեությունը, այդ թվում՝ հաճախորդների սեգմենտները, ապրանքների և ծառայությունների բնույթը, շահութաբերության մակարդակն ըստ բիզնեսի,

բ. առանցքային միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական և ոչ ֆինանսական կատարողականի հիմնական ցուցիչներն այդ շուկաների համար,

գ. նպատակային մրցակցային դիրքավորումը այդ շուկաներում,

դ. ռիսկի ընդհանուր հանդուրժողականության մակարդակը:

***3) Ֆինանսական պլանավորումը և կատարողականի մշտադիտարկումը, որը ներառում է.***

ա. ընդհանուր ֆինանսների կառավարումը,

բ. գործընթացները, որոնք ապահովում են հետևողականություն ռազմավարական առաջնահերթությունների և այլ թիրախների միջև, օրինակ՝ բյուջեն, վաճառքի թիրախները, ռիսկերի ուղեցույցները,

գ. կատարողականի պատշաճ մշտադիտարկումն ապահովող գործընթացները, հետադարձ կապի մեխանիզմները և ուղղիչ գործողությունները,

դ. բիզնեսի ընդհանուր ֆինանսական հետևողականությունը, ինչպիսիք են ակտիվների և պարտավորությունների մնացորդները, իրացվելիության ուժը, ֆինանսավորման քաղաքականությունը:

***4) Կապիտալը, առանցքային գործընկերները և միացումներ ու ձեռքբերումները (M&A), որը ներառում է.***

ա. թիրախային բաժնեմասնակցային կառուցվածքը և դրանից բխող կառավարման հարցերը, օրինակ՝ բաժնետիրական համաձայնագրերը,

բ. կապիտալի ռազմավարությունը, օրինակ՝ կապիտալի թիրախային ծավալը, կապիտալի կառուցվածքը, բաժնետերերի համար գրավչության մակարդակը, շահութաբաժինների քաղաքականությունը և այլն,

գ. խոշոր գործընկերների հետ պայմանագրերի բնույթը, պրոֆիլը և տեսակը,

դ. բիզնեսների ձեռքբերումը և օտարումը,

ե. միացումները և այլ իրավական կառուցվածքները:

***5) Տեխնոլոգիաները և կիբերանվտանգությունը, որը ներառում է.***

ա. ՏՏ քաղաքականության ընդհանուր վերահսկողությունը՝ հաշվի առնելով տեխնոլոգիայի անընդհատ աճող ազդեցությունը բանկային բիզնեսի վրա,

բ. առանցքային ներդրումային որոշումների դիտարկումը, օրինակ՝ խոշոր պատվիրակումները, առանցքային մատակարարներից կախվածությունը, էական տեխնոլոգիական տարբերակները, ներդրումների մակարդակի համապատասխանությունը,

գ. Խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողովի հետ համագործակցությամբ ՏՏ-ին վերաբերող ռիսկերի քաղաքականությունը, ներառյալ՝ կիբերանվտանգության կառավարումը, առանցքային աշխատակիցների և տաղանդների սակավության ռիսկը:

***6) Բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ/ESG) սկզբունքները, որը ներառում է.***

ա. շրջակա միջավայրի, սոցիալական և կառավարչական չափանիշների ինտեգրումը բիզնես քաղաքականության մեջ, ներառյալ՝ որոշակի բիզնեսներում հնարավոր սահմանափակումները,

բ. Բանկի դիրքավորումը՝ որպես տեղական հասարակության զարգացման պատասխանատու խաղացող.

գ. Բանկի տարբերակումը մրցակիցներից՝ ԲՍԿ սկզբունքների հետ կապված:

7.2. Բանկի խորհրդի կամ գլխավոր գործադիր տնօրենի առաջարկով Հանձնաժողովը Կանոնադրության 7.1 կետում նշված պատասխանատվության ոլորտներից բացի կարող է քննարկել նաև այլ հարցեր: Նման պահանջներ ներկայացնելու դեպքում Հանձնաժողովի նախագահը պետք է գնահատի, թե որքանով են այդ հարցերը համապատասխանում Հանձնաժողովի իրավասությունների շրջանակին:

## 8. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Հանձնաժողովը.

1) պարտավոր է յուրաքանչյուր տարի վերանայել Կանոնադրությունը և իր սեփական գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև ստացվող տեղեկատվության որակը և առաջարկություններ ներկայացնի անհրաժեշտ փոփոխությունների մասին,

2) պարտավոր է Խորհրդին հաշվետու լինել Կանոնադրությամբ սահմանված հարցերի շրջանակի, Հանձնաժողովի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարման վերաբերյալ, և ներկայացնել առաջարկություններ՝ բացահայտված խնդիրների պատշաճ կարգավորման կամ բարելավումների համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ,

3) պարտավոր է Բանկի կամ նրա վերահսկողության տակ գտնվող ընկերությունների ղեկավարներից կամ աշխատակիցներից ստանալ իր կողմից պահանջվող ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ՝ Բանկի գլխավոր տնօրենին կամ նրա տեղակալներից որևէ մեկին ուղղված պահանջով,

4) իրավասու է պահանջել ավագ ղեկավարներից և համապատասխան պատասխանատու անձանցից որոշակի ժամկետներում ներկայացնել բանավոր կամ գրավոր աշխատանքային հաշվետվություններ՝ Հանձնաժողովի պատասխանատվության ներքո հարցերի վերաբերյալ և ժամանակին պատասխանել Հանձնաժողովի հարցադրումներին,

5) կարող է Բանկից և նրա վերահսկողության տակ գտնվող ընկերություններից պահանջել ցանկացած տեղեկատվություն, որը նպատակահարմար է համարում,

6) պետք է Գլխավոր գործադիր տնօրենի և նրա տեղակալների կողմից պատշաճ տեղեկացվի և ժամանակին ստանա իր իրավասությունների և պարտականությունների շրջանակին առնչվող ճշգրիտ տեղեկություններ,

7) Խորհրդի կողմից լիազորված է ներգրավել հատուկ խորհրդատուների, փորձագետների կամ այլ խորհրդատուների նախապես համաձայնեցված բյուջեի սահմաններում: Հանձնաժողովը արտաքին խորհրդատուները կարող է ներգրավել Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կամ նրա տեղակալների հետ նախապես խորհրդակցելուց հետո,

8) պետք է հաշվի առնի կիրառելի օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը,

9) անհրաժեշտության դեպքում պետք է աշխատի և համագործակցի Խորհրդին կից այլ հանձնաժողովների հետ (այդ թվում՝ որոշի, թե որտեղ կա պարտավորությունների համընկնում կամ

բաց): Հնարավորության դեպքում՝ Հանձնաժողովի փոխգործակցությունը ԱԿԲԱ բանկի խմբի («ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ և վերջինիս դուստր ընկերություն/ներ) անդամ կազմակերպությունների խորհուրդների և խորհրդին կից հանձնաժողովների հետ կարտացոլվի Խորհրդի մանրամասն պլաններում և գործընթացներում, որոնք մշակվում են շարունակական հիմունքներով յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում: